

† ՄԱՀԳՈՅԺ

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ԲԵՐԲԵՐԵՆՆ

Միջերկրական ծովի ափին՝ Սան-Ռէմօ քաղաքում առ-
ջեալ փետրուարի 14-ին, վախճանուել է տիկին Սրբուհի Բեր-
բերեանը, մեր յարգոյ աշխատակից պ. Մինաս Բերբերեանի ա-
մուսինը: Հանգուցեալը դեռ 28 տարեկան չկար: Նրա կեանքը
և գործունէութիւնը դեռ ապագայումն էր, բայց անգութ հի-
ւանդութիւնը ընտրում է իր զոհերին երիտասարդների մէջ:

Հանգուցեալի մասին մեր Ն. Նախիջևանի մի թղթակցից
ստացանք հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները:

Մնուած Ռուսսիայի Բախմութ քաղաքում—նա իր ուսու-
մը ստացել էր նախ տանը՝ հմուտ և զարգացած լեհուհու հըս-
կողութեամբ, յետոյ Խարկովի պանսիօն-գիմնազիաներից մէկի
մէջ, ուր և աւարտում է ուսումը ոսկի մեդալով: Մի տարի
Խարկովում և մի տարի Մոսկովում կատարելագործւում է ե-
րաժշտական և երգեցողութեան մէջ և Ռոստով տեղափոխուե-
լով, արդէն ամուսնանալուց յետոյ, աւարտում է իր երաժշ-
տական—երգեցողական ուսումը այնտեղի երաժշտական ար-
քունական դպրոցում:

Ամուսնութիւնը հաստատում է նրան Նախիջևանում, որ-
տեղացի էին և նրա ծնողները: Այստեղ նա ծանօթ էր հասա-
րակութեան իր վերին աստիճանի բարի բնաւորութեամբ և
համեստ կեանքով: Համեստ կեանքը—նրա սկզբունքներից մէկն
էր. չնայած իր կարողութեանը, նա երբէք իրան թոյլ չէր տա-
լիս ոչ մի շտապութիւն և ընդհակառակը ամեն կերպ հասնում
էր օնգութեան ուրիշին: Նոր-Նախիջևանի աղքատախնամ օրի-
որդների և տիկիւնների ամենաեռանդուն անդամներից մէկն
էր, նոյնպէս և Ռոստովի բանուոր աղջիկներին խնամող ընկե-
րութեան, որի վարչութեան փոխ-նախագահուհին էր: Բարե-

գործական ասպարիզի վերայ նա գործում էր այնպիսի ձևով, որ երբէք չէր վիրաւորում իրանից ստոր կանգնածի ինքնասիրութիւնը, ընդհակառակը, կապում էր նրան իր հետ, շնորհիւ իր անկեղծ և դէլիկատ վարմունքի: Բայց դա միակ ասպարէզը չէր, որին նուիրուած էր հանդուցեալը: Նա շատ էր սիրում և գրականութիւնը, որին մասնակից էր իր յօդուածներով և թարգմանութիւններով Ռոստովում հրատարակուող ДОНСКАЯ РЫБЬ թերթում: Ահա ինչ է ասում վերջինս նորա մասին խօսելիս.

«Հանգուցեալը աշխատակցում էր «ДОНСКАЯ РЫБЬ»-ին 1901-ից մինչև 1903 թ. և եռանդուն կերպով աշխատում էր իւր այդ նոր ասպարիզում իբրև թարգմանիչ, փոխադրող և այլն: Մի ժամանակ այդ թերթում տպուող թարգմանական և մասամբ ինքնուրոյն վիպական բաժինը նա էր կառավարում:

Բացի գրական գործունէութիւնից, վաղաթառամ Ս. Կ.-ի յիշատակը թանկ է «Д. Р.»-ի աշխատակիցների համար նաև նորանով, որ նա միշտ իւր սրտին մօտ էր համարում բոլոր այն ձախորդութիւնները, որ ունեցել է նորա աշխատակցութեան ժամանակ մեր լրագիրը, այնպիսի յափշտակութեամբ և անշահասիրութեամբ, որ յատուկ է տպագրական խօսքին անկեղծ հաւատացողներին ու սիրողներին միայն...»:

Նոյնպիսի համակրական տողեր նուիրուած են Ս. Բերբերեանի յիշատակին և «Մշակ»-ին Նոր-Նախիջևանից ուղարկուած թղթակցութեան մէջ: Այստեղ, ի միջի այլոց, քիչուած են տիկնոջ կազմած գրական երեկոյթները:

Տիկնոջ բնակարանում տեղի ունեցած գրական երեկոյթներին, զանազան ժամանակ մասնակցել են թէ տեղական գրական ոյժերը (Նր. Շահազիզ, Գ. Չուբար, Մուշէ վրդ., հանգուցեալի ամուսին Մինաս Բերբերեան և այլն), նոյնպէս և ժամանակաւորապէս Նախիջևանում գտնուող հայ գրականները, ինչպէս Ղ. Աղայեան, Յ. Տէր Միրաքեան, Ատրպետ և այլն: Քանիցս ինքը տիկինն էլ կարդացել է այդ երեկոյթներին իր յօդուածները և ճանապարհորդական նկատողութիւնները: Հանգուցեալը շատ է ճանապարհորդել իր կեանքում և եղել է Նւրուպոյի բոլոր նշանաւոր կենդրոններում, ինչպէս Լօնդոն, Պարիզ, Բէրլին, Ամստերդամ և այլն, նոյնպէս և Զուիցարիայի և Գերմանիայի բազմաթիւ վայրերում. իր առաջին ճանապարհորդութիւններից մէկը նա արել է Մայր Հայաստանում, ուր

այցելել է ճեմարանի 25-ամեակի առթիւ Ա. Էջմիածինը, շրջակայ վանքերը և գիւղերը Աղէքսանդրապոլը, Անին, Թիֆլիս և այլն: Այդ ճանապարհորդական նկատողութիւններից նա կարգացել էր մի օր Անիի մասին, որը լիովին կարող է գաղափար տալ թէ տիկնոջ գրական ընդունակութիւնների և թէ այն անկեղծ սիրոյ մասին, որով նա սիրում էր իր ազգը և նրա յիշատակները: Ազգին օգտակար լինելու մասին նա շատ էր մտածում և ամենավերջին ժամանակներս որոշել էր ամուսնու հետ միասին թարգմանել ռուսերէն և հրատարակել նորագոյն հայ վիպասանների գրութիւնները: Սակայն ծրագիրը մնաց ծրագիր, որի իրագործումը մնում է այժմ սպասել նրա ամուսնուց:

Յաւիտենական հանգիստ հանգուցեալի ոսկրներին:

ՀԱՅ.